

Արսեն Է. Հարությունյան

ՆՈՐԱՀԱՅՏ ՎԻՄԱԳՐԵՐ «ԼԻՏՐ» ԿՇՌԱԶԱՓԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ *

Գ (40) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2012

Գ (4) քառի, թիվ 4 (40) համահայկական հանդես ՎԻՄ համահայկական հանդես

Հայկական վիմագրերն ու մատենագրական վկայությունները, լինելով մեր պատմության կարևոր սկզբնաղբյուրները, հարուստ նյութեր են տրամադրում հասարակական կյանքի սոցիալ-տնտեսական, ինչպես նաև մշակութային ոլորտներն ուսումնասիրելու համար:

Այս առումով աչքի են ընկնում հատկապես նվիրատվական արձանագրությունները, որոնցում կան բազմաթիվ վկայություններ՝ հողատարածքներ, այգիներ, ջրաղացներ, կանխիկ դրամ (դահեկան, դուկատ, դեկան, սպիտակ), մթերք և կենցաղային պարագաներ նվիրաբերելու վերաբերյալ: Նվիրատվական արձանագրություններում նվիրատուները, տալով անշարժ կամ շարժական գույք, ստացել են բարոյական հատուցում՝ հոգու փրկության համար պատարագներում հիշվելու ակնկալիքով¹: Նրանք միաժամանակ մտածել են նաև իրենց մերձավորների հոգու փրկության մասին, մանավանդ որ սարսափած են եղել Նեռի ուրվականով և Քրիստոսի Երկրորդ գալստյան ժամանակ կատարվելիք ահեղ դատաստանով²: Եղել են դեպքեր, երբ քրիստոնյաները, կրկնակի շահագործման ենթարկվելով օտար հարստահարիչի և վաշխառու առևտրականի կողմից, իրենց փրկությունը կապել են եկեղեցու և հանդերձյալ կյանքի հետ, անշարժ ու շարժական գույքը նվիրաբերել են վանքերին ու եկեղեցիներին, որպեսզի վերջիններին սպասավորները նրանց հոգու փրկության համար աղոթեն Աստծուն³:

Նվիրատվությունների շարքում ուշագրավ են հոգևոր հաստատություններին մթերք և կենցաղային պարագաներ (աղ, բրինձ, մոմ, ձեթ,

*Հոդվածն ընդունվել է տպագրության 19.11.2012:

1 Տե՛ս **Գրիգորյան Գր.**, Հայկական վիմագրություն, Եր., 2000, էջ 74:

2 Տե՛ս **Սարգսյան Լ.**, Հայաստանի նվիրատվական արձանագրությունները (9-14-րդ դարեր), Եր., 2007, էջ 13:

3 Տե՛ս **Ղաֆաղարյան Կ.**, Հաղբատ (ձարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները), Եր., 1963, էջ 110:

խունկ և այլն) ընծայելու մասին համեմատաբար սակավ վկայությունները: Դրանք երբեմն նվիրաբերվել են միջնադարյան Հայաստանում տարածում գտած դրամակշռային միավոր հանդիսացող «լիտրով»:

Մեր ներկա անդրադարձը «լիտր»-ին պայմանավորված է Ս. Հռիփսիմե և Ս. Շողակաթ տաճարների որմերին հիշյալ կշռաչափի մասին վկայող մի քանի վիմագրերի հայտնաբերմամբ, որոնք քննության կենթարկենք վիմագրագիտության մեջ հայտնի վերծանության մեթոդով:

«Լիտր» կշռաչափի անունը կրող միավորներ Հայաստանում շրջանառվել են դեռևս 11-րդ դարից, ինչը կապված է եղել ավատատիրական հարաբերությունների զարգացման և խորացման հետ⁴: «Լիտրի» մասին հիշատակություններ կան նաև ձեռագրերի հիշատակարաններում, ժամանակագրություններում: Քննությունը ցույց է տալիս, որ հին ժամանակներից սկսած՝ դրանք ունեցել են տարբեր կշիռներ:

Այսպես՝ ըստ առանձին բացատրական բառարանների՝ 1 լիտրը հավասար է «չափ **ժբ** (12) ունկեաց, մեծի կամ փոքու. իբր զի մեծ ունկին է **ժբ** (12) տրամ, և փոքրն **ը** (8), ուստի մեծ լիտրն լինի իբր **ձխը** (144) տրամ, և փոքրն՝ **ղգ** (96)»⁵: Հայաստանում «լիտրը 12 ֆունտ է, Թիֆլիսում՝ 9 ֆունտ, Ախալքալաքում՝ 20 ֆունտ: Այժմ հեղուկների և չոր նյութերի չափի միություն է, որ տանում է մի կիլոգրամ թորած ջուր»⁶, ինչպես նաև «մի տեսակ չափ է, որ համաձայն Հ. Մանանդյանի քննության՝ հավասար է 326 գրամի. այժմ Հայաստանում լիտրը 6 տաճկական օխա կամ 12 ռուսական թունկա է»⁷:

Հայաստանի չափ ու կշիռների ուսումնասիրմամբ զբաղվել է դեռ Անանիա Շիրակացին⁸, այնուհետև վերջինիս չափումների հիման վրա աշխատություններ ունեն Հ. Ավգերյանը⁹, Բ. Պատկանյանը¹⁰, Հ. Մանանդյանը¹¹, Ռ. Վարդանյանը¹² և այլք:

Այժմ առանձին-առանձին անդրադառնալով մեր ձեռքի տակ եղած արձանագրություններին՝ փորձենք ներկայացնել նաև «լիտր» կշռաչափի բոլոր հնարավոր հաշվումները:

Արձանագրություններից մեկը փորագրված է Վաղարշապատի Ս. Շողակաթ եկեղեցու արևմտյան պատին, արտաքուստ, մուտքի ձախ կողմում՝ երեք տողից.

4 Տե՛ս **Վարդանյան Ռ. Հ.**, Հայաստանի չափերն ու կշիռները (V-XV դարեր), Եր., 1989, էջ 170:

5 Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հատոր առաջին, ի Վենետիկ, 1836, էջ 888:

6 Հայերեն բացատրական բառարան, հատոր երկրորդ, կազմեց՝ **Ստ. Մալխասեանց**, Եր., 1944, էջ 200:

7 **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան, հատոր Բ, Եր., 1973, էջ 285-286:

8 Տե՛ս Անանիա Շիրակացու մատենագրությունը, աշխ. **Ա. Աբրահամյանի**, Եր., 1944:

9 Տե՛ս **Հ. Ավգերյան**, Բացատրություն չափուց և կշռոց, Վենետիկ, 1821:

10 Տե՛ս **Բ. Պատկանյան**, Անանիայի Շիրակունոյ, Մանացորդք բանից, Ս. Պետերբուրգ, 1877:

11 Տե՛ս **Հ. Մանանդյան**, Կշիռները յեվ չափերը հնագույն հայ աղբյուրներում, Յեր., 1930:

12 Տե՛ս **Ռ. Վարդանյան**, նշվ. աշխ.:

ՀՆՉՕՒՅՆ ԱՅԵՍԵՂԻՒՌ ԴՄԿՏՈՒՄՆ ԽՈՍՏԱՑԱՄԻՔԸ ԴԿԹՆՏԱԿԵՆՃ ԼՏԵԱՆՑ ՅՇՏԿԻՌՃԿԻՌՅԻՆՑ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԾԱԼՕՂՀՅՕՔՆ **ԱՅ**, ԵՄ ԵՂԻԻ ՈՐԴԻ ՄԿՐՏՈՒՄՄ, ԽՈՍՏԱՑԱ **ԱԲ**
 ԸԼՈՂԼ ԱՂԿԼ ԱԹԻԽ ՏԱՐԵՆ :Ճ: (100) ԼԻՏԵՐԽ :ԱՂ: ՅԼԻԸ ԱՍԼ ԱՂԿ
 :ՌՃՀԲ: (1723) ԹՎԻՆ:

Փաստորեն, Մկրտումը Ս. Շողակաթ վանքի միաբանության կենցաղա-
 յին կարիքները հոգալու համար նվիրաբերել է Ճ (100) լիտր աղ: Հ. Մանան-
 դյանն իր վերոնշյալ աշխատության մեջ Շիրակացու տեղեկությունների
 հիման վրա նշում է, որ ունկին, լինելով հռոմեական և բյուզանդական
 հիմնական կշիռներից մեկը, այժմյան գրամներով հավասար է 27.2:
 Լիտրը, որ պարունակում էր 12 ունկի, հավասար կլինի՝ $27.2 \times 12 = 326.4$
 գրամ¹³, ուստի նվիրաբերած 100 լիտր աղն, ըստ Մանանդյանի, կկազմի
 $326.4 \times 100 = 32$ կիլոգրամ 640 գրամ և $320.4 \times 100 = 32$ կիլոգրամ 40 գրամ
 ըստ Ռ. Վարդանյանի և Ա. Քալանթարյանի ստորև բերվող հաշվումների¹⁴:

Ճ (100) լիտր աղ է նվիրաբերում նաև Ս. Հռիփսիմեի տաճարի արևմտ-
 յան պատին արտաքուստ փորագրված հնգատող վիմագրի նվիրատուն:

ԿԱՄԱԿՆ ԱՅԵՍՄԱԿԱՆԻ ԿԱՄԱԿՆ **ԱՅ** ԵՄ ՄԱՐԳԱՐԻ
ՈՐԴԻ ԱՍԼԱՆՍ ԵՏՈՒ ԱԲ ՈՒԽՏԻՍ
ՏԱՐԵՆ Ճ (100) ԼԻՏԵ ԱՂ ՈՐԴՈՑ ՈՐԴԻ, ՈՐ
Ե՛ՆԻԿԱՏԵՑ ԺԱՆՎՄԵՉ: :Ե: (5) ՆԱԻԱԿԱՏԵԼ ԱՅ ԺԱՄՆ ՉՄԵՉ
ՅԻՇԵՆԹՎԻՆՈՒՃՀԲՍԻՆ: ՅԻՇԵՆ, ԹՎԻՆ ՌՃՀԲ (1723) ԱԼՄԻՆ:

Նշենք, որ 100 լիտրը հավասար է եղել 1 կենդինարի, որը Շիրակացու
 մոտ համապատասխանում է հռոմեական centupondium-ին և բյուզան-
 դական kentenarion-ին¹⁵: Ըստ սկզբնաղբյուրների՝ կշռային համակարգի
 այս միավորը, որ կոչվել է նաև դանթար, հավասար է եղել 32.04 կիլոգրա-
 մի: Հավանաբար Հայաստանում այն կիրառվել է 324 թվականից սկսած
 մինչև 11-րդ դարի վերջը¹⁶:

Միջնադարյան Հայաստանում օգտագործված կշռի միավորների
 չափական մեծությունները որոշելիս առաջնակարգ նշանակություն են

13 Տես Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 29-30:
 14 Տես Ռ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 170:
 15 Տես Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 34:
 16 Տես Ռ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 165:

Դ (Ժ) քաարի, թիվ 4 (40) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2012

ՎԲՄ համահայկական հանդես

ստանում նաև հնագիտական պեղումների միջոցով հայտնաբերված նմուշները, որոնց հիման վրա չափուկշռային համակարգի միավորները վերածվում են մերօրյա կշռային համակարգի: Վերջինիս միջոցով հաստատված «լիտրի» կշիռը հավասար է եղել միջին հաշվով՝ 320.4 գրամի (ըստ Դվինի նյութերի) կամ 320 գրամի (ըստ Անիի նյութերի)¹⁷: Պեղումներով հայտնաբերված նոմիսմա-էքսագիոնի (հայերենում՝ դահեկանի) նմուշների, ինչպես նաև տարբեր կշռաքարերի (բրոնզե, քարե, ապակե) առկայությունը ցույց է տալիս, որ Հայաստանում դեռ վաղ միջնադարից լայն կիրառություն է ունեցել բյուզանդական դրամակշռային համակարգը: Նոմիսմա-էքսագիոնի (դահեկանի) մեծությունն, ըստ գտնված նյութերի, միջին հաշվով կազմում էր 4.45 գրամ¹⁸, և, քանի որ 1 լիտրը կազմում էր ՀԲ (72) դահեկան¹⁹, հետևաբար, ըստ Դվինի նյութերի, կունենանք $4.45 \times 72 = 320.4$ գրամ 1 լիտրի համար:

Հաջորդ արձանագրությունը փորագրված է Ս. Հռիփսիմեի վանքի հարավային պատի ձախակողմյան խորշի ձախ նիստին՝ չորս տողից.

ԿԱՅԱՄՅԵՍՆԱՆՈՒՆԵՐԱՆ ԿԱՄԱԻՆ **ԱՅ** ԵՍ ՏԱՆՈՒՏԵՐ ՄԱՆ
ՌԿԻՐ ԴԻԴԻԱՆՍԵՏՈՒՐ ՌԿԻ ՈՐԴԻ ԴԻԼԱՆՍ ԵՏՈՒ **ՄԲ**
ՌԻՏՏԻՍԻԿԻՏԻԲՐԻՆՁԱԷ ՌԻՏՏԻՍ :Ի: (20) ԼԻՏՐ ԲՐԻՆՁ ԱՄԷԼՆՂ
ՅԱ ՅԱՄԼԻ:]

Այսինքն՝ վանքին նվիրաբերվել է 20 լիտր բրինձ, որը կազմում է $326.4 \times 20 = 6$ կիլոգրամ 528 գրամ (ըստ Մանանդյանի) և $320.4 \times 20 = 6$ կիլոգրամ 408 գրամ (ըստ Ռ. Վարդանյանի): Եվ Հ. Մանանդյանը, և՛ Ռ. Վարդանյանը հիմք են ընդունում Շիրակացու վկայությունները, պարզապես Մանանդյանն ունկին հաշվում է 6.8 (= փոքր սիկլ) $\times 4 = 27.2$ ունկի, որից էլ $27.2 \times 12 = 326.4$ գրամ 1 լիտրի համար, այնինչ Վարդանյանը լիտրի չափը հաշվում է սիկլը կամ փորչէն (հայկական) = 1 դահեկան (4.45) + 1 սիմէս (2.225) = 6.675 գրամ և, քանի որ ունկին հավասար էր 4 սիկլի, հետևաբար $6.675 \times 4 = 26.7$, որից էլ $26.7 \times 12 = 320.4$ գրամ 1 լիտրի համար²⁰:

Հաջորդ արձանագրությունը փորագրված է նախորդից աջ՝ հինգ տողից.

17 Տե՛ս նույն տեղում, էջ 138:

18 Տե՛ս Վարդանյան Ռ. Հ., Քալանթարյան Ա. Ա., Վաղ բյուզանդական դրամակշռային միավորների նմուշներ Դվինի պեղումներից, Հայկական ՄՍՀ-ում 1981-1982 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Ջեկուցումների թեզիսներ, Եր., 1983, էջ 39:

19 Տե՛ս Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 30:

20 Տե՛ս նույն տեղում, էջ 160:

**ԿԱՄԱՐՆԵՍԵԱՊՍԳԵՂՅԻՒՆ
ՄՈՆՎԵՄԻՆԻՆԵՐԵԼԵՍՔԻ
ԵՎԼ ԴՆՏՈՒՍՔԻՆՈՒՏԻՍՏԱ
ԲԵՆԼԵՎԿԱՐԱՍԻՆԵՄԵԿԻ
ՏԻՄՈՒՄ ԴՈՑՈՒՄ**

ԿԱՄԱՐՆ $\overline{ԱՅ}$ ԵՍ ՁՈՐԱԳԵՂՅԻ ՄԻ
ՄՈՆՍ ԵՒ ԻՄ ԹՈՒՆԼՔ ԵՂԻԱԶԱՐ
ԵՒ ՎԱՐԴԱՆ ՏՈՒԱՔ $\overline{ՄԲ}$ ՈՒԽՏԻՍ ՏԱ
ԲԵՆԼ ՄԷԿ ԿԱՐԱՍ ԲԱԺԿԻ ԵՒ ՄԷԿ ԼԻ
ՏԻ ՄՈՄ ՈՐԴՈՑ ՈՐԴԻ, ՈՐ...:

Արձանագրությունն անավարտ է: Այստեղ ունենք լիտրով տրվող մոմի նվիրաբերում, այն է՝ 1 լիտր մոմ, որը կազմում է 326.4 գրամ (ըստ Մանանյանի): Մոմը, որն առայսօր եկեղեցիներում մեծ կիրառություն ունի, բառարանում բացատրվում է իբրև «բամբակե պատրոյգ, որը թաթախում են հալած մոմի մեջ և իբրև ճրագ գործածում, մանաւանդ եկեղեցիներում»²¹:

Նվիրատվական արձանագրություններում հաճախ հանդիպում ենք նվիրատուի կողմից եկեղեցուն «մոմագին», «լուսագին»²² տալու արտահայտությունների, որոնք ուղղակիորեն կապվում են վերը նշվածի հետ: Այսինքն՝ նվիրատուն եկեղեցուն տալիս է նվեր (հիմնականում դրամական)՝ իբրև մոմի (լույսի) գին: Այս առումով ուշագրավ է Հաղպատավանքի մեծ գավթի արևմտյան մուտքի բարավորի արձանագրությունը. «...ԵՄՄԻԱՐԳԻՉԷԼ, ՈՐԴԻ ՇԱՀԱՆՇԱՀԻ, ՈՐԴՈՍ ՄԵԾԻՆ ԶԱԶԱՐԻ, ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ՄԵՐ ՎԱՆԷՆԻ... ԸՍՏ ՆԱԽՆԵԱՑՆ ՄԵՐՈՑ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ԵՒ ՏՎԱՔ ՅԱԲԱՆԴԱՆՑՈՂԻԿ Կ...ՈՇ (1500) ՍՊԻՏԱԿ Ս(ՈՒՐ)Բ/ ՆՇԱՆԻՍ ՄՈՍԱԳԻՆ ՅԱՄԷՆ ՏԱՐԻ...»²³:

Մոմի նվիրատվության մասին է խոսվում նաև Ս. Հռիփսիմեի վանքի գանգակատան հարավարևելյան հիմնասյան արևմտահայաց կողմի վեցտողանի վիմագրում.

**ԿԱՄԱՐՆԵՍԵԱՊՍԱՊԱ
ՈՒՄԻՆԻՆԵՐԵԼԵՍԵՏՈՒՄ
ՈՒՍՏԻՍՏԱՐԱՆԵՎԿԱՐԱՍ
ԲԱԺԿԱՐԱՍԻՆԵՄԵԿԻ
ԴՈՑՈՒՄ ԴՈՑՈՒՄ
ԴՈՑՈՒՄ ԴՈՑՈՒՄ**

ԿԱՄԱՐՆ $\overline{ԱՅ}$ ԵՍ ԳԱՍՊԱ
ՐԻ ՈՐԴԻ ԲԱԲԷԼՍ ԵՏՈՒ $\overline{ՄԲ}$
ՈՒԽՏԻՍ ՏԱՐԷՆ Ա (1) ԿԱՐԱՍ
ԲԱԺԿԱՑՈՒ Ա (1) ԼԻՏՐ ՄՈՄ ՈՐ
ԴՈՑ ՈՐԴԻ, ՈՐ Ե (5) ՆԱԻԱԿԱՏԵԼԱՅ
ԺԱՄՆ ԶՄԵԶ ՅԻՇԵՆ ՌՃՀԷ (1728):

Վերջին երկու արձանագրություններում վկայված «բաժկի» և «բաժկացու» բառերը Հր. Աճառյանը դասում է գավառական բառերի շարքը, համարում նոր բառեր և բացատրում այսպես. բաժկի-

21 Հայերէն բացատրական բառարան, հատոր երրորդ, կազմեց՝ Ստ. Մալխասեանց, Եր., 1944, էջ 356:
22 Դիվան հայ վիմագրության, պրակ II, կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան, Եր., 1960, էջ 114: Տե՛ս նաև Հայերէն բացատրական բառարան, հ. երկրորդ, էջ 212:
23 Կ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ., էջ 171:

«Հաղորդութեան գինի», բաժակացու – «Հաղորդութիւն պատրաստելու գինի»²⁴: Այսինքն՝ վանքին նվիրաբերվել է որոշակի քանակությամբ գինի՝ պատարագների ժամանակ կիրառելու նպատակով: Նույն տեսակետն է արտահայտում նաև վիմագրագետ Ս. Ավագյանն իր «Վիմական արձանագրությունների բառարանություն» աշխատության մեջ, որտեղ «փաս-փաս-գի» բառի քննության ժամանակ հիշատակում է նաև «բաժակ» բառեզրը՝ իբրև պատարագի ժամանակ հավատացյալներին բաժանվող գինի²⁵: «Բաժակ» եզրույթն իբրև հաղորդության գինի, որ տրվել է եկեղեցիներին, քննարկվել է նաև մեր կողմից²⁶:

Կենցաղային պարագաների կազմում ունենք նաև ձեթի և խունկի նվիրատվության վերաբերյալ արձանագրություններ, որոնք փորագրված են Ս. Հռիփսիմեի վանքի արևմտյան պատին, առաջինը՝ վեց, երկրորդը՝ հինգ սողերից.

ՇՆՄԸՕԲՆՔԻԵՍՏԱՆ
ՌՏԵՐ ՀԱՄՁԱՍԵՏՈՒՄԲ
ՌԻՏԻՄ:ԵԼԻՏԵԶԵԹԱԵ
ՅԱՄԻՆՈՐԴԱՅ ՈՐԴԻ, ՈՐ Ի
ՏԵՍԱՅ ԺԱՄՆ ՅԼԻՇԵՆ ՉՄԵԶ
ՌՃՀԲ

ՇՆՈՐԸՕՔՆ ՔԻ ԵՍ ՏԱՆ

ՌԻՏԵՐ ՀԱՄՁԱՍ ԵՏՈՒ ՄԲ

ՌԻՏԻՄ :Ե: (5) ԼԻՏՐ ԶԵԹ ԱՄԷԼՆ]

ՅԱՄԻՆ] ՈՐԴԱՅ ՈՐԴԻ, ՈՐ Ի :Ե: (5) ՆԱԻԱԿԱ

ՏԵՍԱՅ ԺԱՄՆ ՅԼԻՇԵՆ ՉՄԵԶ,

ՌՃՀԲ (1723):

Հայտնի է, որ ձեթը նույնպես մեծ կիրառություն է ունեցել եկեղեցիներում՝ իբրև լույսի աղբյուր: Վերջինիս նվիրաբերումը լիտրերով հիշատակված է նաև Սանահնի վանքի «Քոթուկ»-ում, որը հրատարակել է Կարո Ղաֆաղարյանը: Այն հետևյալն է. «ԿԱՄԱԻՆ ԱՅ, ՄԵԲ՝ ՈՐԴԻՔ ԲԷԿԻՆ ԵԻ ԽՈՒԹԼՈՒԻՆ, ԹՈՌՆ ԿՈՒՃԻՊԱՐԿԻՆ, ԸՆԶԱՅԵՑԻ ՄԲ ԱԾ ԱԾՆԻՄ ԵԻ ԻՄ ՄԱԻՐՄ ԳԵՐԵԶՄԱՆԱՅ, ՉՄԵՐ ՈՐԴԻՆ ԶՎԱՐԴԱՆՆ, ՈՐ ՏԱՅ :Ճ: (100) ԼԻՏՐ ԶԵԹ Ի ՄԲ ԱԾ ԱԾՆԻՄ. :Ծ: (50) ԼԻՏՐՆ ԱԾ ԱԾՆԻՆ ԵԻ :Ծ: (50) ԼԻՏՐՆ ԻՄ ՄԱԻՐ ԳԵՐԵԶՄԱՆԱՅՆ ԱՄԷՆ ՏԱՐԻ ԱՆԽԱՓԱՆ...»²⁷:

Լիտրով է նվիրաբերվել նաև խունկը, որը կազմել է եկեղեցական արարողությունների ու պատարագների անբաժանելի մասը:

24 Հր. Աճառյան, Հայերեն արևմտական բառարան, հատոր Ա, Եր., 1971, էջ 381, Հայերեն բացատրական բառարան, հ. առաջին, կազմեց՝ Ստ. Մալխասեանց, Եր., 1944, էջ 315, Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, էջ 421, Մ. Օրմանյան, Ծիսական բառարան, Եր., 1992, էջ 58:

25 Տե՛ս Ավագյան Ս. Ա., Վիմական արձանագրությունների բառարանություն, Եր., 1978, էջ 333-338:

26 Տե՛ս Ա. Հարությունյան, «Բաժակ» գինու նվիրաբերման վկայություններ հայկական վիմագրերում, «Էջմիածին», 2011, Բ, էջ 121 – 129:

27 Տե՛ս Ղաֆաղարյան Կ., Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Եր., 1957, էջ 189, արձ. 185:

**ԿՆՔԱՅԵՍԻՒՆԻ ՉՈՒԲՈՒՄ
ՍԱՀՎԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԼԵՏՐՈՒԿԱԿԱՆՔԵՐԵՐԻ
ԴՊՅՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԿՆՔԱՅԵՍԻՒՆԻ
ՄԵՅ ՇԵՆՁՄԵ ԶՈՒՆՆԵՐԻ**

ԿԱՄԱԻՆ **ԱՅ** ԵՍ ԽԵՉՈՒՄԻ ՈՐԴԻ

ՍԱՀՎԱԿՍ ԵՏՈՒ **ՄԲ** ՈՒԽՏԻՍ :Ա: (1)

ԼԻՏԻ ԽՈՒՆԿ ՏԱՐԷՆՆ ԵՒ...

«ՈՂԴՈՑ ՈՐԴԻ, ՈՐ Ի :Ե: (5) ՆԱԻԱԿԼԱՅԼ ԵԱՅԺ ՏՄ
ՄՆ ՅԼԻՇԵՆ ԶՄԵԶ ՌՃՀԲ (1723):

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հ (Ժ) ԳՊՐԻ, ԹԻՎ 4 (40) ԽՈՒՄՆԵՐ-ՊԵՆԿՆԵՐ, 2012

Գ (Ժ) ԿՆՔԱՅԵՍԻՒՆԻ ԿԱՆՈՒՄ

Հետաքրքիր է նաև, որ արձանագրություններում հիշվող նվիրատուները ակնկալում են պատարագներ նավակատիքի օրերին: Տեղին է նկատել, որ նավակատիք է կոչվում տաճարի, տան բացման ու նվիրագործության արարողությունը: Այսպես են կոչվում նաև տարվա հինգ տաղավար տոների նախընթաց օրերը, երբ ներելի է Վարդավառի, Աստվածածնի ու Սուրբ Խաչի նախընթաց շաբաթ օրերին, առավոտյան պատարագից հետո, իսկ Ծննդյան ու Զատիկի ճրագալույցներին՝ երեկոյան պատարագից հետո, կաթնեղեն ու ձկնեղեն կերակուրներ գործածելը²⁸: Փաստորեն, նվիրատուները ակնկալել են պատարագներ ստանալ տարվա հինգ տաղավար տոների նախընթաց օրերին, սակայն դժվար է ասել՝ իրենք են այդպես նախընտրել, թե այդ օրն են նվիրել:

Նավակատիքին պատարագ ստանալու վերաբերյալ արձանագրություն ունենք նաև Մայր տաճարի գլխավոր մուտքի նախասրահի հարավային կողմում, ինչպես Ալիշանն է նշում. «Ի հարաւակողմն նորին աւագ դրան արձանագրեալ կայ յիշատակ Տփղիսեցի կրպակաւոր նուիրատուաց, յամի 1682, գայս օրինակ»։ «...ԽՈՍԱՍՑԱՔ ՏԱՐԷՆՆ ԱՄԷՆ ԴՈՒՔԱՆ ՄԵԿԱԿ ԶԱՐԷՔ²⁹ ՄՈՍ ՏԱԼ **ՄԲ** ԷԶՄԻԱԾՆԱՅ ԵՒ ՄԻԱԲԱՆՔ **ՄԲ** ԱԹՈՌՈՅՍ ԽՈՍԱՍՑԱՆ :Ե: (5) ՆԱԻԱԿԱՏԵԱՑՆ ԶՄԵԶ ԴԱՇՏԱՍԲ ԵՒ ԴԱՍԱՐԱԳՕՔ ՅԻՇԱՍԱԿԵԼ...»³⁰:

Հարկ է նկատի առնել, որ Վաղարշապատի վանքերի վերոնշյալ արձանագրությունները թվագրվում են ուշ միջնադարով, մի ժամանակաշրջան, երբ Արևելյան Հայաստանը գտնվում էր Պարսկաստանի տիրապետության տակ, ուր շրջանառության մեջ են եղել նաև արաբական կշիռներ ու չափեր: Հավելենք, որ արաբական ժամանակաշրջանում (7–8–րդ դդ.) լիտրի կշիռը հավասար է եղել 408 գրամի կամ 1 ռուսական ֆունտի³¹, որը կիրառվել է նաև ուշ միջնադարում, հետևաբար, չի բացառվում, որ արձանագրություններում նշյալ չափերը հաշվարկված լինեն հենց արաբական լիտրերով: Օրինակ՝ եթե բյուզանդական «լիտրի» կշռով 20 լիտր բրինձը

28 Տե՛ս Մ. արք. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 33:

29 Չարեքը (չարեկ) որևէ բանի մեկ քառորդ մասն է: Իբրև տերմին կիրառվում է կշռաբարի, երկարության, լայնության, հեղուկի չափի, ծանրության և այլ մեծությունների համար: Այս վիճակում «չարեք»-ը, հավանաբար, գործածվում է իբրև ծանրության չափ, իսկ որպես այդպիսին մեկ չարեքը հավասար է 2,5 ֆունտի: Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Դ, Եր., 2007, էջ 388: Հայերէն բացատրական բառարան, կազմեց՝ Ստ. Մալխասեանց, հ. չորրորդ, Եր., 1945, էջ 15:

30 Ալիշան Գ., Այրարատ. Բնաշխարհի Հայաստանեայց Վեներտիկ, 1890, էջ 224:

31 Մանանդյանը նշում է, որ Մ. Գոշի «Դատաստանագրքում» լիտրի կշիռը 100 դրամ է և, քանի որ 1 դրամը հավասար է 4,08 գրամի, ուստի 1 լիտրը կկազմի 408 գրամ: Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 30:

կազմում էր 6 կիլոգրամ 528 գրամ, ապա արաբական կշռով կունենանք 20 X 408 = 8 կիլոգրամ 160 գրամ բրինձ:

Տեղին է հիշատակել նաև Անիի Մայր տաճարի արևմտյան պատին փորագրված Ահարոն (Առանս) Մագիստրոսի 1055-1056 թթ. արձանագրությունը, ուր ևս հիշվում է «լիտր» կշռային միավորը: Մագիստրոսը, գալով «գեղեցկաշէն բերդս յԱնի»։ «...ԲԵՐԻ ՈՍԿԻ ՄԱՏԱՆԵԱԻ/ ԳԻՐ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԶԻՆՔՆԱԿԱԼ ԾԻՐԱՆԵԾԻՆ ԹԱԳՈՒՀՈՅՆ ՎԱՍՆ ՊԱՆՏԻՑ ՏԱՆՑ ՔԱՂԱՔԻՍ ԵՒ ԹԱՍՏԱԿԻՆ, ԶՈՐ ՏԱԻՆ/ ԱՍ ՅԱՄԷ ԶԱՓ ՈՒԹԻՑ ԼՏԵՐՑ [ԱՅ] ԵՒ Ի ԽՆԴՐՈ ԻՇԽԱՆԱԻՐԱՑՍ ԽԱՓԱՆԵՑԻ ԵՒ ԶԳԻՏ ԵՐԿՈՒՑ ԼՏԵՐՑ ԶՈՐ ՏԱՅՐ ՍՈՒԹԱ/ՍԻՔՆ...»³²:

Նկատենք, որ վիմագրում հիշվում են մի շարք հարկատեսակներ, ինչպիսիք են «պախտից տանց» – տնահարկ, «թաստակ» – բնահարկ, որը տրվել է բերքի 1/4 մասի չափով (ըստ Մանանդյանի), «գիւտ» – բյուզանդական պետությանը տրվող հարկատեսակ: Ըստ Ս. Պողոսյանի՝ դրանք գանձվել են մթերքով. մեկը ութ լիտրի, իսկ մյուսը երկու լիտրի չափով³³: Սակայն, ինչպես նկատում է Հ. Բարթիկյանը, «պախտ» և «թաստակ» բառերի մեջ բնահարկ տեսնելու հայագետների սխալը բխում է «լիտր» բառի ոչ ճիշտ մեկնաբանությունից: Անիի արձանագրության մեջ «լիտր» բառը գործածված է ոչ թե որպես հեղուկ կամ հատիկային մարմինների ծանրության չափ, այլ որպես լիտր ոսկի, իսկ մեկ լիտր ոսկին հավասար էր 72 ոսկեդրամի՝ դահեկյանի³⁴: Փաստորեն, ութ լիտր «պաղտ տանց և թաստակ»-ը հավասար էր 576 (= 8 X 72) ոսկեդրամի, իսկ Անի քաղաքի մութասիբի կամ ոստիկանապետի՝ Ահարոն մագիստրոսին վճարած երկու լիտր «գիւտ» հարկը, որն առևտրականներից գանձվող տուրքն էր, կազմում է 144 (2 X 72) ոսկեդրամ: Ըստ Հր. Բարթիկյանի՝ Անիին բռնի ուժով տիրացած Բյուզանդիան իր տիրապետությունն ավելի ամրապնդելու նպատակով ընդառաջ է գնում քաղաքի բնակչության և իշխանավորների խնդրանքին ու հրաժարվում վերոհիշյալ հարկերը գանձելուց³⁵:

Հատկանշական է, որ «լիտրի» վերաբերյալ վկայություններ կան նաև մատենագրական աղբյուրներում: 15-18-րդ դարերի հիշատակարաններում պահպանվել են մի քանի տեղեկություններ, օրինակ՝ 1758 թ. սով է եղել, որի հետևանքով «...ԴՃ (400) մարդ Հայոց ազգէն մեռաւ անօթուն... Յորժամ յունիս ամիսն մտաք՝ եղաւ քիլայ մի ցորեան Կ (60) դուրուշ, լիտր մի չամիչ՝ Ե (5) դուրուշ, լիտր մի շիրիկ իւղ՝ Զ (6) դուրուշ»³⁶: Լիտրը հիշատակված է նաև վարձատրություններում: Պատվիրատուն ձեռագրի համար գրչին վճարում է. «...ԱՃԾ (2150) դր[ամ] և Զ (6) կապիճ հաց, Ա (1) լիտր եղ, Բ (2) մեղր...»³⁷: Դժվարին պայմաններում անգամ շարունակվել են վանքերին

32 Դիվան հայ վիմագրության, պրակ I, կազմեց՝ Հ. Ա. Օրբելի, Եր., 1966, էջ 38:

33 Տե՛ս Պողոսյան Ս. Պ. Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX-XIII դդ., Եր., 1956, էջ 191:

34 Տե՛ս Բարթիկյան Հ. Մ., Ահարոն Մագիստրոսի արձանագրության (1055-1056) մեջ հիշատակված հարկերի մասին, «ՊԲՀ», 1959, N 4, էջ 172:

35 Տե՛ս Նույն տեղում, էջ 172:

36 Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հատ. II, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Եր., 1956, էջ 528:

37 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին (1401-1450), կազմեց՝ Լ.

տրվող նվիրատվությունները. «ԹՎին ՌՄԻԷ (1778) բազում չաքուրկայ և կարկուտ էկաւ. կարի դժուար, սով սաստիկ եղաւ, վանքին ուրն լիտր չամիչ եկաւ, ուրն լիտր գինու շիրայ»³⁸:

Ամփոփելով և ընդհանրացնելով վերն ասվածը՝ կարելի է հանգել հետևյալին

- «Լիտր» անունը կրող կշռային միավորներ Հայաստանում շրջանառվել են 11-րդ դարից, սակայն հատկապես Անիի և Դվինի հնագիտական պեղումներից հայտնաբերված նումիսմա-էքսագիոնի կամ դահեկանի նմուշներն ապացուցում են, որ Հայաստանում դեռ վաղ միջնադարից լայն կիրառություն է ունեցել բյուզանդական այդ դրամակշռային միավորը:

- Բյուզանդական ժամանակաշրջանի կշռային համակարգում 1 լիտրը հավասար է 12 ունկիի, իսկ 1 ունկին՝ 27.2 գրամի, հետևաբար 1 լիտրը կազմում է 326.4 գրամ: 100 լիտրի համար սահմանվել է 1 կենդինարը կամ դանթարը, որն էլ հավասար է 32.04 կիլոգրամի:

- Նույն ժամանակաշրջանի համար Անիի և Դվինի հնագիտական պեղումների գտածոների համապատասխան քննությունը ցույց է տալիս հետևյալը. քանի որ 1 լիտրը հավասար է նաև 72 դահեկանի և վերջինիս մեծությունն էլ միջին հաշվով կազմում է 4.45 գրամ, հետևաբար 1 լիտրը կազմում է 320.4 գրամ:

- Ուշ միջնադարում, երբ Արևելյան Հայաստանը գտնվում էր Պարսկաստանի տիրապետության տակ, շրջանառվել են նաև արաբական կշիռներ ու չափեր: Լիտրը, որ դեռ արաբական ժամանակաշրջանում հավասար է եղել 408 գրամի, կիրառվել է նաև ուշմիջնադարյան Հայաստանում, ինչը չի բացառում վերոհիշյալ արձանագրություններում կշռի՝ այդ կերպ հաշվարկը:

- Բերված օրինակներից կարելի է եզրահանգել, որ «լիտր» ասելով՝ պետք է նկատի ունենալ նաև ներկայիս կիլոգրամը, քանի որ լիտրի վերածումը գրամների հաճախ բերում է չնչին քանակության, որը դժվար թե արձանագրվեր և դրա դիմաց պատարագ տրվեր:

Հայաստանի չափուկշռային համակարգի «լիտր» միավորի հիշատակմամբ Վաղարշապատի թվով յոթ նորահայտ արձանագրությունները, որոշակիորեն լրացնում են մեր գիտելիքները նշված կշռաչափի վերաբերյալ:

Ս. Խաչիկյան, Եր., 1955, էջ 71:

38 Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 528:

Summary

NEW LITHOGRAPHES ON WEIGHT “LITRE”

Arsen E. Harutyunyan

This article presents certain evidence from newly-found inscriptions about “liter” weight measure in the medieval Armenia. The given weight measure was mentioned in the newly-found dedicatory inscriptions of St. Hripsime and St. Shoghakat churches, where the pasture donated products (salt, rice, candle etc.) to be commemorated in the liturgies. The article also contains a short overview of the works of several scholars (Schirakaci A., Manandyan H., Vardanyan R.), who studied Armenian measuring system as well as relative counts concerning liter. The work also includes description of the weight stones, found during archaeological excavations, and proving that liter was used in Armenia. According to R. Vardanyan, it was equal to 320,4 grams (according to Dvin materials) or 320 grams (according to Ani materials). There are examples from annalistic sources, particularly from memoranda and chronicles, where liters represent today’s kilos. Thus, the existence of liter in the weight system of the medieval Armenian inscriptions contributes to our knowledge of this measure of weight.